# ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՐՑԱԽՑԻ ՎԱՐՊԵՏՆԵՐԻՆ

## ՆԱԽԱԳԾԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Արցախից բռնի տեղահանված և Հայաստանում բնակություն հաստատած քաղաքացիներից շատերն ունեն երկարամյա փորձ արհեստագործության ոլորտում: Մեր հայրենակիցներից շատերը սերնդեսերունդ փոխանցված արհեստներով ինքնազբաղ տնտեսություն են վարել Արցախում:

Ծրագրի շրջանակում նախատեսվում է որպես աջակցություն տրամադրել աշխատանքային գործիքներ և սարքավորումներ (մինչև 1 300 ԱՄՆ դոլար արժողության սահմաններում) հետևյալ արհեստներին տիրապետողներին.

- Դերձակ
- Գորգագործ
- Զարդագործ
- Կոշկակար
- Զոդող
- Թիթեղագործ
- Փայտագործ
- Դարբին
- Քարագործ վարպետ
- Վերանորոգող արհեստավոր (էլեկտրականության մոնտաժող, ջեռուցման համակարգերի մոնտաժող, սանտեխնիկական, շինհարդարման աշխատանքներ իրականացնող և այլն),

Աջակցությունը տրամադրվելու է առնվազն 2 աշկերտ ունեցող վարպետների:

## ԽՆԴԻՐՆԵՐ

- Անսպասելի և արագ տեղահանության արդյունքում բազմաթիվ ինքնազբաղ տնտեսվարողներ իրենց աշխատանքային գործիքները թողել են Արցախում

## ԲՅՈՒՋԵ

| | |
|---|---|
| Աշխատանքային գործիքների արժեք | **1 300 ԱՄՆ դոլար** |
| Շահառուների քանակ | **100 անձ** |
| Վարչական ծախսեր | **26 000 ԱՄՆ դոլար** |

**ԸՆԴԱՄԵՆԸ՝ 156 000 ԱՄՆ ԴՈԼԱՐ**

## ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| | |
|---|---|
| Աշխարհագրություն | **Հայաստանի Հանրապետություն** |
| Իրականացման ժամկետ | **2 ամիս** |

## ՇԱՀԱՌՈՒՆԵՐ

- Անմիջական շահառուներ՝ **բռնի տեղականված 100 վարպետ և 200 աշկերտ**
- Անուղղակի շահառուներ՝ **800 անձ, վարպետների և աշկերտների ընտանիքների անդամներ**

## ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

- **Տեղահանված արցախցի վարպետները ծրագրի միջոցով շատ արագ կկարողանան վերսկսել իրենց աշխատանքը**
- **Ծրագիրը կխթանի արցախյան արհեստների, ավանդույթների և մշակույթի պահպանմանը**
- **Ծրագրի միջոցով արհեստագործական պրակտիկ կրթություն կստանան 200-ից ավելի պատանիներ և երիտասարդներ**